



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋԵՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թիւ 1727
Ապրիլ 6, 1994

Արժանաշնորհ
Տ. Բարի Քհնյ. Մէթճեան
Հովիւ Ա. Սահակ եւ Ա. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուիկմուտ.

Սիրելի Տէր Բարի,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 23, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 27, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի եօթն անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Տոքթ. Վարդան Իկիտպաշեան
- Բարգէն Մկրեան
- Գառնիկ Թորոսեան
- Նուպար Բարսակիւեան
- Դաւիթ Նալպանտեան
- Փօլ Մէշէճեան
- Մելիսէ Սարաֆեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Հնչուն դրամի մուտքն ու ելքը չեն համապատասխաներ ծխական տեղեկագրին մէջ արձանագրուածին հետ: Հնչուն դրամի գումարը յիշուած չէ մեքենագրուած տեղեկագրին մէջ: Գ. մասը ամբողջացած չէ: 1994 տարուան պիտճէն 28,603 տոլարի բաց մը կ'ակնկալէ: Հաշուեքնիչ Յաճնախումբի տեղեկագիրը կը պակսի: Ատենագրութեան մէջ չէ յիշուած տրաստու անդամներուն թիւը: Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պէտք է ստորագրուի երկու անձերու կողմէ: Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպատիկ ցանկի վրայէն: Ծխական Խորհուրդի ընտրութեան համար ներկայացուած թեկնածուներու ցանկը երկպատիկ չէ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ